



Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

**Հ Ա Յ Ա Ս Ս Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն Կ Ա Ռ Ա Վ Ա Ր Ո Ւ Թ Յ Ա Ն Ն Ի Ս Տ Ի
Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ի Ց**

26 դեկտեմբերի 2013 թվականի N 53

**50. ՆՈՏԱՐԻՍՏԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻՆ
ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

1. Հավանություն տալ նոտարիատի համակարգի զարգացման հայեցակարգին՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին՝ մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը ներկայացնել նոտարիատի համակարգի զարգացման հայեցակարգից բխող միջոցառումներին ցանկը:

**Հ Ա Յ Ա Ս Ս Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն
Վ Ա Ր Ձ Ա Պ Ե Տ**

Տ Ի Գ Ր Ա Ն Մ Ա Ր Գ Ս Յ Ա Ն

2014 թ. հունվարի 21
Երևան



Հավելված
ՀՀ կառավարության 2013 թ.
դեկտեմբերի 26-ի նիստի N 53
արձանագրային որոշման

Հ Ա Յ Ե Ց Ա Կ Ա Ր Գ

ՆՈՏԱՐԻԱՏԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ

I. ՆՈՏԱՐԻԱՏԻ ՈԼՈՐՏ ՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ

1. Դատաիրավական բարեփոխումների կարևոր մաս է կազմում նոտարիատի համակարգի բարեփոխումները, որոնց արդյունքում նոտար պետք է իրականացնի իրեն վերապահված դերը՝ աջակցել արդարադատության իրականացմանը: Նոտարը նաև կարևոր դեր է խաղում Հայաստանի Հանրապետության Մահմանադրության և ավատեւված՝ անձանց գույքային իրավունքների (և առավելապես՝ սեփականության իրավունքի) իրականացման գործում: Հայաստանի Հանրապետության անկախությունը և ինքնիշխանությունը հետո արդեն իսկ իրականացվել են որոշակի համակարգային փոփոխություններ նոտարիատի բնագավառում, մասնավորապես պետական նոտարիատին փոխարինելու է եկել մասնավոր նոտարիատը, ինչը նոտարի անկախության երաշխիքներից է: Ընդ որում, նոտարական համակարգն ամբողջությամբ համապատասխանեցվել է լատինական նոտարական համակարգին, իսկ 2005 թվականին ՀՀ նոտարական համակարգը առաջինը տարածաշրջանում դարձրել է Լատինական նոտարիատի միությունն է:

2. 2011 թվականին իրականացվել են որոշակի օրենսդրական փոփոխություններ, ինչի արդյունքում նոտար դառնալու ընթացակարգերը ժամանակավորապես որոշակիորեն ազատականացվել են. նոտարի մոտ ստացվող ամսական լիցենզիայի և պարտադիր նախապայման չի նոտարների թեկնածուների որակավորման քննությունների մասնակցելու համար: Նշված քայլը կրում է ժամանակավոր բնույթ, մինչև օրենսդրությամբ նոտարի թեկնածուի ստացվող ամսական ընթացակարգերի հստակեցնելը:

3. Նոտարիատի «մասնավորեցումը», ինչը լատինական նոտարիատի սկզբունքներից է, առաջ է բերել նաև պետություն-նոտարիատ հարաբերությունների վերանայելու անհրաժեշտություն՝ նախկին վարչական կառավարման մոդելը փոփոխելով կարգավորման և ընդհանուր վերահսկողություն մոդելով: Հաշվի առնելով նոր մոտեցումները՝ 2011

թվական ինչպես նաև Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունում (այսուհետ՝ նախարարություն) տեղի ունեցան կառուցվածքային փոփոխություններ (այդ թվում նաև նոտարիատի բաժնի լուծարում): Նոտարիատի բաժնի գործառնությունը վերաբառնում էր նաև նոտարիատի գործառնությունը (նոտարիատի գործառնությունը): Նախարարության անվանումը (նորը պատասխանատու է նոտարիատի ոլորտում քաղաքականության մշակման և համապատասխան օրենսդրության գործառնությունների և Օրինականության վերահսկողությունը տեսչությանը (որն իրականացնում է ընդհանուր վերահսկողությունը և նոտարիատի գործունեության վերաբերյալ քաղաքացիներին բողոքներին ուսումնասիրությունը): Արդյունքում, նոտարներին զգալի մասը հնարավորություն է ստացել առավել ազատականացված միջավայրում ծառայություններ մատուցել, վերացվել են արհեստական խոչընդոտները (նախկինում էր նաև քաղաքում ժամանակահատվածի գործերով իրավունք ունեցող զբաղվել միայն որոշ նոտարներ), իսկ խախտումներ թույլ տված միջառնակ նոտարներին նկատմամբ վարույթներ են հարուցվել, նյութերը հետազոտվել և փոխանցվել են նոտարական պալատ, ինչի արդյունքում արդեն իսկ որոշ նոտարներ Պալատի կողմից ենթարկվել են պատասխանատվության, իսկ մեկ նոտար դատարանի վճռով ազատվել է պաշտոնից:

4. Տեղի է ունեցել որոշակի փոփոխություններ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում, համաձայն որի 2012 թվականից սկսած, անշարժ գույքի հետ կապված այն գործարքները, որոնք կնքվել են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված նմուշային պայմանագրերի հիման վրա, ենթակա են պարտադիր նոտարական վավերացման և կարող են կնքվել Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում (այսուհետ՝ կադաստր): Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանվել են նմուշային պայմանագրերի ձևերը:

5. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հավանության է արժանացել նոտարիատի բնագավառում էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման հայեցակարգը, ինչպես նաև ապահովվել է նշված ծրագրի իրականացման ֆինանսավորումը՝ «Աջակցություն արդարադատության մատչելիության ապահովմանը» (Support for access to justice) Հայաստան - Եվրոպական միություն - Եվրոպայի խորհուրդի համատեղ ծրագրի շրջանակներում:

6. Զգալի աշխատանք է տարվել և կան արդեն շնչափելի արդյունքներ նոտարական գործողություններին սակագներին

հստակ Ե ց մ ան , ս պաս ար կ մ ան ո ր ակ ի ապահ ր վ մ ան գ ո ր ծ ու մ , աշ խաստան ք այ ի ն
ն Ե ժ ի մ ի պահ պան մ ան ն մ ի շ ար ք այ լ հ ար ց Ե ր ու մ , ո ր ո ն ք ն ախկ ի ն ու մ
ար դ ար աջ ի ո ր Ե ն առ աջ աջ ն ու մ Ե ի ն ք աղ աք աջ ի ն Ե ր ի դ ժ գ ո հ ու թ յ ու ն ը :

7. Ի ր ակ ան աջ վ ած Բ ար Ե փ ո խ ու մ ն Ե ր ի ար դ յ ու ն ք ու մ ար դ Ե ն ի ս կ
զ գ ալ ի ո ր Ե ն Բ ար Ե լ ալ Ե լ Ե Ն ո տար ի առ ի գ ո ր ծ ու ն Ե ու թ յ ու ն ը : Այ ս պ Ե ս
օ ր ի ն ակ`

1) Բ ո լ ո ր ն ո տար ակ ան գ ր ա ս Ե ն յ ակ ն Ե ր ու մ տ Ե ս ան Ե լ ի վ ա յ ր Ե ր ու մ
փ ակ ց վ ած Ե ն յ ու ր աք ան չ յ ու ր ն ո տար ի կ ո ղ մ ի ց ս ա հ մ ան վ ած ս ակ ա գ ն Ե ր ը
(Չ այ ս ս տան ի Չ ան ր ապ Ե տ ու թ յ ան կ առ ալ ար ու թ յ ան կ ո ղ մ ի ց ս ա հ մ ան վ ած
ս ակ ա գ ն Ե ր ի մ ի ջ ակ այ ք ու մ) ն պ Ե տ ակ ան տ ու ր ք ի չ ա փ Ե ր ը : Բ ո լ ո ր
ն ո տար ն Ե ր ի կ ո ղ մ ի ց ապահ ր վ վ ած Ե վ ճ ար ն Ե ր ի ը ն դ ու ն ու մ ը ի ն չ պ Ե ս
փ ո խ ան ց մ ան մ ի ջ ո ց ո վ , այ ն պ Ե ս Ե լ` կ ան խ ի կ Ե դ ան ակ ո վ , ը ն դ ո ր ու մ ,
կ ան խ ի կ վ ճ ար ու մ ն Ե ր ի դ Ե պ ք ու մ ի ն չ պ Ե ս ն ո տար ակ ան ծ առ այ ու թ յ ան
վ ճ ար ի , այ ն պ Ե ս Ե լ պ Ե տ ակ ան տ ու ր ք ի հ ա մ ար մ ի ան գ ա մ ի ց տ ր ա մ ա դ ր վ ու մ Ե
հ ս կ ի չ դ ր ա մ ար կ դ այ ի ն մ Ե ք Ե ն այ ի (Չ Դ Մ) կ տ ր ո ն : Տ վ յ ալ ի ր ալ ի ճ ակ ու մ
ն ո տար ակ ան գ ո ր ծ ո ղ ու թ յ ու ն ն Ե ր ի (ծ առ այ ու թ յ ու ն ն Ե ր ի) գ ն ա գ ո յ ա ց ու մ ը
ար դ Ե ն ի ս կ լ ր ի վ թ ա փ ան ց ի կ Ե , ի ն չ ը ն պ ս ս տ ու մ Ե ք աղ աք աջ ի ն Ե ր ի
վ ս տ ա հ ու թ յ ան ա ճ ի ն :

2) Օ ր Ե ն ս դ ր ակ ան փ ո խ ո խ ու թ յ ու ն ն Ե ր ի ար դ յ ու ն ք ու մ , 2012
թ վ ակ ան ի ն . ն ո տար ն Ե ր ի թ Ե կ ն ած ու ն Ե ր ի ո ր ակ ալ ո ր մ ան
ք ն ն ու թ յ ու ն ն Ե ր ի ն հ ն ար ալ ո ր ու թ յ ու ն ու ն Ե ց ան մ ս ս ն ակ ց Ե լ ն ո տար ակ ան
ս տ ա ժ ալ ո ր ու մ չ ան ց ած ան ձ ի ն ք (ս ակ այ ն առ ն վ ա գ ն 5 տ ար վ ա
մ ս ս ն ա գ ի տ ակ ան աշ խաստան ք այ ի ն փ ո ր ձ ո վ) :

3) Ն ո տար ակ ան պ ալ ա տ ր ար դ Ե ն վ ար ձ ակ ալ Ե լ Ե շ ի ն ու թ յ ու ն , ն ար դ Ե ն
ի ս կ ձ ն ալ ո ր վ Ե լ Ե պ ալ ա տ ի ք ար տ ու դ ար ու թ յ ու ն , ո ր ը ի թ ի վ ս այ լ ո ց
ս պ ս ս ար կ ու մ Ե ն ո տար ակ ան պ ալ ա տ ի թ Ե ժ գ ի ծ ը :

8. Ն ո տար ակ ան ծ առ այ ու թ յ ու ն ն Ե ր ի ո ր ակ ի ն Բ ն ակ չ ու թ յ ան
Բ ալ ար ար վ ած ու թ յ ան զ գ ալ ի ա ճ ը հ ս ս տ ա տ վ Ե լ Ե ն ան ք աղ աք աջ ի ակ ան
հ ս ս ար ակ ու թ յ ան կ ա գ մ ակ Ե ր պ ու թ յ ու ն ն Ե ր ի կ ո ղ մ ի ց (օ ր ի ն ակ`
Ե ր ի տ ս ս ար դ ի ր ալ ա ք ան ն Ե ր ի ս ս ո ց ա ց ի ա Չ Կ-ի` Ե Ա Չ Կ աջ ակ ց ու թ յ ամ Բ
ի ր ակ ան աջ վ ո ղ մ ն ն ի թ ո ր ի ն գ ն Ե ր) ի ր ակ ան աջ վ ո ղ
հ Ե տ ա գ ո տ ու թ յ ու ն ն Ե ր ու մ :

II. ԱՌԿԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԼՈՒԾՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

9. Չնայած վերը նշված ձեռքբերումներին, նոտարական համակարգում դեռևս առկա են մի շարք խնդիրներ, որոնք անհրաժեշտ է լուծել կարճ ժամկետներում, մասնավորապես՝

1) անհրաժեշտ է ներդնել քաղաքացու պահանջով **մեկ պատու հանի** **սկզբունքով** ծառայություններ մատուցելու նոտարի պարտավորությունը (անշարժ գույքի առքուվաճառք, տրանսպորտային միջոցների առքուվաճառք, առևտրային կազմակերպություններում բաժնեմասի և բաժնետոմսերի օտարում և այլն), նպատակ ունենալով, սեղմ ժամկետում անցնելու բացառապես կամ առավելապես մեկ պատուհանի սկզբունքով ծառայությունների մատուցմանը.

2) անհրաժեշտ է ներդնել **էլեկտրոնային նոտարի** համակարգը, ինչը հնարավորություն կտա նոտարի կողմից գործողությունները առավելապես **նոտարի էլեկտրոնային ստորագրությունը հաստատված էլեկտրոնային փաստաթղթերի միջոցով** կատարմանը, ինչը կբացառի թղթային կրիչի վրա ներկայացվող փաստաթղթերի կեղծման հնարավորությունը, կբարձրացնի գործարքների անվտանգությունը և կապահովի սպասարկման բարձր որակը, ներառյալ մեկ պատուհանի սկզբունքով ծառայությունների մատուցում.

3) նոտարի **նյութակն ապտասխանատվությունը** սահմանափակված է միայն նրա կողմից դիտավորյալ հասցված վնասի փոխատուցմամբ, իսկ մասնագիտական գործունեության պարտադիր ապահովագրության չսփռելի համապատասխանում առկա անշարժ գույքի շուկայի գներին: Անհրաժեշտ է նախատեսել **նոտարի լրիվ գույքային պատասխանատվություն**՝ անկախ մեղքի ձևից (օբյեկտիվ պատասխանատվություն կամ մեղքի առկայության կանխավարկած), նախատեսել նոտարական պալատում համապատասխան հիմնադրամի առկայությունը, որտեղից կհատուցվեն վնասները նոտարի անվճարունակության դեպքում, ինչպես նաև զգալիորեն ավելացնել ապահովագրության ծավալը (Երևան քաղաքում այն հասցնելով մոտ երեսուներեք հիսուս միլիոն դրամի յուրաքանչյուր ապահովագրական դեպքի համար).

4) գործարքների անվտանգությունը բարձրացնելու և անհրաժեշտության դեպքում վճարման փաստի ապացուցման գործընթացը հեշտացնելու նպատակով անհրաժեշտ է բանկերի հետ համատեղ գործարկել համապատասխան հաշվարկային համակարգ, ինչպես, օրինակ գործում է Հայաստանի Հանրապետության փաստաանների պալատի դեպքում (ՓԴ Կադպա): Տվյալ գործողությունն արդյունքում հնարավոր

կլիինի առավել ապահովել անշարժ գույքի գործարքներին կատարումը և դրանց համար վճարելը՝ միևնույն ժամանակ կողմերին ազատելով ակրեդիտիվային / ԷՍՔԸՈՈԻ գործարքներին դեպքում նախատեսված վճարներ կատարելու պարտավորությունից: Որպես հարակից արդյունք է նաև համապատասխան գումարներին համար վճարված տոկոսները նոտարական պալատի կողմից օգտագործելու հնարավորությունը, ինչը իր հերթին կնպաստի նոտարական պալատի ֆինանսական անկախության ամրապնդմանը:

5) չնայած «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը նախատեսում է նոտարի կատարած փաստաթղթերի լրիվ ապացուցողական ուժ, սակայն օրենսդրական այլ կարգավորումներին արդյունքում նոտարական փաստաթղթերը նույնիսկ վեճի բացակայության պայմաններում կարող են կիրարկվել միայն դատարան դիմելու միջոցով: Նման կարգավորումը չի համապատասխանում լատինական նոտարիատի երկրներում ընդունված նոտարի կարգավիճակին, և փաստացի զգալիորեն նվազեցնում է գործող նոտարական համակարգի արժեքը, որպես **դատարաններին (արդարադատության իրականացման) աջակցող համակարգի**: Անհրաժեշտ է վերականգնել **նոտարի կատարողական մեկագրություն ինստիտուտը**: Արդյունքում նոտարը պետք է իրավասություն ունենա ապահովել իր կողմից պատրաստված և հաստատված պայմանագրերի կատարումը՝ դրանք կողմերից որևէ մեկի կողմից խախտելու դեպքում, տուժող կողմի պահանջով տալով համապատասխան կատարողական թերթիկ (օրենքով սահմանված հստակ կարգով և ծավալներով), որը և ենթակա կլինի հարկադիր կատարման: Նշված փոփոխություններին արդյունքում զգալիորեն կավելանա նոտարական համակարգի կողմից ստեղծվող հավելյալ արժեքը, կաճի վստահությունը նոտարիատի նկատմամբ (նոտարական վավերացում ստացած փաստաթղթերի արագ կատարում), ինչպես նաև հնարավոր է դատարանների ծանրաբեռնվածությունը զգալի նվազեցնում: Միևնույն ժամանակ, նշված գործողությունները, ինչպես և մնացած նոտարական գործողություններին կատարումը, ենթակա կլինի դատական վերահսկողության: Նշված ինստիտուտի օրենսդրական կարգավորման մշակման ժամանակ անհրաժեշտ է նաև հաշվի առնել Սահմանադրությամբ պաշտպանվող մարդու հիմնարար իրավունքները և սահմանադրական արժեքները՝ առավել մեծ ու շարժունություն դարձնելով անձի սեփականություն և արդյունավետ դատական պաշտպանության իրավունքներին իրականացմանը:

6) Լիազորագրերի կեղծելու նիսկը նվազեցնելու նպատակով անհրաժեշտ է ստեղծել **լիազորագրերի առցանց շտեմարան**, որը կկազմի էլեկտրոնային նոտարի համակարգի մաս, սակայն դրան կմիանան նաև նոտարական և լիազորագրերի հավասարեցված լիազորագրեր տալու իրավունք ունեցող այլ սուբյեկտներ՝ **հյուսիսատուական հիմնարկները** (e-consular համակարգ), **համայնքի ղեկավարները** (օրենսդրությամբ գործող դեպքերում նաև ծավալով): Սույն գործողությունների և կատարումը չի ենթարկում տարբեր սուբյեկտների (հյուսիսատուական հիմնարկի կամ համայնքի ղեկավարի) լիազորությունների նվազեցում, այլ նախատեսում է գուտ դրանց իրականացման հետ կապված իրավահարաբերությունների հստակեցում և էլեկտրոնային եղանակով լիազորագրերի տրամադրման հնարավորությունը նաև ներմուծելու: Նույն համակարգում հնարավոր կլինի նաև պարզ գրավոր ձևով՝ էլեկտրոնային ստորագրություն միջոցով հաստատված լիազորագրերի տրամադրումը քաղաքացիների և իրավաբանական անձանց կողմից, ինչը կրկին կապահովի անվտանգությունը: Համակարգը միևնույն ժամանակ պետք է ապահովի տվյալների անվտանգությունը և գաղտնիությունը:

7) պաշտպանված տիրույթում **առցանց կտակների շտեմարանի և ժառանգական գործերի վարման** բաժնի ներդրումը հնարավորություն կտա ապահովել ժառանգություն գործընթացի անվտանգությունը: Միաժամանակ զգալիորեն կպարզեցվեն և կավտոմատացվեն ժառանգություն հետ կապված գործընթացները: Համակարգը պետք է համապատասխան կապ հաստատի քաղաքացիական կացություն ակտերի գրանցման տվյալների բազայի հետ, որպեսզի անձի մահանալու և համապատասխան ժառանգություն գործի բացման դեպքում հնարավոր լինի հստակ իմանալ համապատասխան կտակ(ներ)ի առկայությունը մասին:

8) նոտարներից յուրաքանչյուրը պահպանում է սեփական արխիվը: Արդեն իսկ զգալի ծավալով փաստաթղթեր են հավաքվել միջաբան նոտարական գրասենյակներում: Անհրաժեշտ է հստակեցնել արխիվների վարման կարգը, դրանց պահպանման ժամկետները, ազգային արխիվ կամ որևէ այլ արխիվ հանձնելու դեպքերը և կարգը, դրա ֆինանսավորման առանձնահատկությունը:

9) նոտարական գործողությունների համար նախատեսված սակագները անհրաժեշտ է վերանայել: Գործարքների համար անկախ գործարքի գնից սահմանված սակագներ հաստատելը չի համապատասխանում նոտարի լրիվ նյութական պատասխանատվության սկզբունքին, ինչպես նաև որոշակի խնդիրներ է առաջացնում սոցիալական պետություն սկզբունքի համատեքստում: Արդյունքում

անհրաժեշտ է անցում կատարել **տոկոսային սակագներին**, գույքի օտարման վճարը սահմանելով կես տոկոսից մինչև երկու տոկոս, կախված գործարքի գնից՝ ընդ որում, ամեն դեպքում սահմանելով ստորին և վերին շեմ: Մնացած գործարքներին համար անհրաժեշտ է վերացնել գործող սանդղակը (օրինակ եռապատիկից հնգապատիկ և այլն) և սահմանել կոնկրետ սակագին, քանի որ կառավարության և քաղաքացիական հասարակության կողմից իրականացված հետազոտությունները հստակորեն ցույց է տալիս, որ գներին զգալի փոփոխություններ տեղի չեն ունենում, և, որպես կանոն նոտարներին կողմից սահմանվում է վերին կամ ստորին շեմին համապատասխան գումար (նաև լատինական նոտարիատի սկզբունքներին, որ նոտարներին միջև մրցակցությունը պետք է պայմանավորված լինի ծառայության որակով, այլ ոչ թե սակագնի չափով):

10) որոշ նոտարական գրասենյակներում դեռևս գոյանում են զգալի հերթեր: Նաև կա որոշակի անհամաչափություն տարբեր նոտարական տարածքներին միջև: Անհրաժեշտ է վերանայել նոտարական տարածքներին աշխարհագրությունը և սահմանները՝ նպատակ ունենալով բնակչության քանակի վրա հիմնված տարածքային բաժանումից անցնել **գործարքներին / ակտիվություն վրա հիմնված տարածքային բաժանման**: Նաև անհրաժեշտ է ներդնել հերթերի կառավարման և հերթագրման արդյունավետ մեթոդներ (նախնական հեռախոսային հերթագրումից մինչև հերթերի կառավարման ավտոմատացված համակարգեր և առցանց հերթագրման մոդելներ՝ կախված կոնկրետ գրասենյակներին կարիքներից և հերթերի հետ կապված փաստացի վիճակից):

11) բարեփոխումների արդյունքում նոտարական համակարգը պետք է նաև լինվին ստանձնի արդարադատությանը աջակցող մարմինի գործառնությամբ, դրա համար անհրաժեշտ է միջարք՝ դատարանին ընդդատյա հարցերով՝ վեճերի բացակայության դեպքում, որոշումներին կայացման հնարավորությունը փոխանցել նոտարներին՝ թողնելով նշված գործողություններին նկատմամբ դատական վերահսկողության հնարավորությունը: Այդպիսի գործառնություններ են՝

ա. քաղաքացիական կացության ակտերի գրառումներին անճշտությունները պարզելու գործերի վարույթը,

բ. գույքը տիրազուրկ ճանաչելու գործերի վարույթը,

գ. երեխայի որդեգրման վերաբերյալ գործերի վարույթը,

դ. անչ ափահասի ն լրիվ գործունակ ճանաչելու (էմանսիպացիայի) գործերի վարույթը,

ե. քաղաքացուն անհայտ բացակայող ճանաչելու գործերի վարույթը,

զ. ըստ ներկայացնողի կամ օրդերային կորցրած արժեթղթերով հավաստված իրավունքների վերականգնելու գործերի վարույթը,

է. իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման վերաբերյալ գործերի վարույթը:

Նշված գործողությունները պարտադիր դատական կարգով հաստատելու պահանջը առաջացնում է զգալի արդարացված դժգոհություն քաղաքացիների մոտ (քանի որ ժամանակատար և ծախսատար է), ինչպես նաև ծանրաբեռնում է դատարանները: Մինչև նույն ժամանակ, որպես անձանց իրավունքների պաշտպանության երաշխիք, նշված գործողությունները, ի թիվս այլ նոտարական գործողությունների, ենթակա կլինեն դատական վերահսկողության, ինչպես նաև վեճի առկայության դեպքում, երբ նոտարը կմերժի նոտարական գործողության կատարումը (գործողություն կատարելը մերժելու դեպքում գումար չի գանձվի), անձը հնարավորություն կստանա դիմել դատարան:

12) նոտարական գրասենյակները կարող են իրականացնել պետության կողմից վարվող **ռեգիստրների սպասարկման գործառնությունը** (փաստաթղթերի մուտքագրում, ստանդարտ փաստաթղթերի ստեղծում, համակարգի կողմից պատրաստված փաստաթղթերի հանձնում քաղաքացիներին և այլն): Նշված գործընթացները կիրականացվեն նոտարի կողմից համապատասխան փաստաթղթերը էլեկտրոնային ստորագրության հաստատելու և էլեկտրոնային համակարգի կիրառմամբ համապատասխան մարմիններին հանձնելու միջոցով, ինչպես ստացված պատասխանները (որոշումներ)՝ տպելու և քաղաքացիներին հանձնելու միջոցով: Նաև նոտարներին պետք է գույքահեռ հանձնվի **ՔԿԱԳ նրոշ գործառնությունների իրականացում**՝ ամուսնության և ամուսնալուծության հայրության որոշման, արտադատարանական կարգով որդեգրման պետական գրանցում, ընդ որում ՔԿԱԳ մարմիններն կշարունակեն վարել իրենց գործունեությունը, իսկ գանձվող պետական տուրքը կմուծվի համապատասխան համայնքի բյուջե:

13) նշված գործողությունների արդյունքում պետության կողմից մատուցվող ծառայություններին մի մասը կիրականացվի նոտարական գրասենյակներին կողմից: Ծառայություններին որակը ապահովելու

ն պատակով անհրաժեշտ կլինի սահմանել **նոտարակն գրասենյակներին առաջադրվող նվազագույն պահանջները**՝ ինչպես անվտանգություն ասպահովման մասով (պատերի ամրացում, արխիվային սենյակներին անվտանգություն ասպահովում, չհրկիզվող պահարաններին առկայություն, ծրագրային կոդերի անվտանգություն պահանջներն այլն), այնպես էլ քաղաքացիներին հարմարավետություն և հաճախորդներին սպասարկման որակի մասով (ընդհանուր մակերես, սպասարանի մակերես, հերթագրման համակարգերի առկայություն, ինտերնետ տեւախցիկներին առկայություն, նոտարաններին առկայություն և քանակն այլն): Ընդ որում նվազագույն չափանիշները պետք է սահմանվեն նոտարակն պալատի կողմից կամ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի հրամանով՝ «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում սահմանվելիք ընդհանուր սկզբունքներին հիման վրա, ինչը հնարավորություն կտա ժամանակի հետ գուցե ն հստակեցնել պահանջները՝ բարձրացնելով սպասարկման որակը:

14) Լուրջ խնդիր և խոչընդոտ է մնում իրագրվածություն պակասը, ինչի արդյունքում քաղաքացիները հաճախ ունենում են թյուր պատկերացում նոտարի կողմից մատուցվող ծառայությունների մասին, ծառայությունների սակագների, արդեն իսկ ընձեռնված հնարավորությունների մասին և այլն: Արդյունքում վատ աշխատող համակարգի ընկալումը կարող է մնալ բնակչության զգալի մասի մոտև բերել համակարգի բարեփոխումների ձախողման: **Անհրաժեշտ է մշակել և իրականացնել իրագրման համապատասխան արշավներ և միջոցառումներ:** Զուգահեռաբար, անհրաժեշտ է մշակել տեղեկատվական թերթիկներ, ինչպես նաև նոտարակն պալատի կայքում տեղադրել առանձին նոտարակն գործողությունների իրականացման կարգը նկարագրող տեղեկատվություն՝ ներառյալ անհրաժեշտ փաստաթղթերը, գործողությունների կատարման ժամկետները, պետական տուրքի և վճարների հաշվարկման մեխանիզմը:



